

ԳԻՐՔ ԱՂՈԹԻՑ. ՄՏԱԹՈՒԹԻՒՆՔ ՄԱՂԹՈՂԱԿԱՆՔ

(Հատուած)

Աղօթք՝ առ Երանուհի Կոյսն Մարիամ

Այդպէս զքեզ տիրուհի՝ սրբուհի Մարիամ մայր Աստուծոյ, գթութեամբ գերալրացեալ։ Վեհագունի թագաւորին դուստրը։ Մայր փառաւորագոյն. մայր որբոց. մխիթարութիւն վրտարանդելոց. ճանապարհ մոլորելոց. ողջութիւն ամենեցուն ի յուսացելոց։ Կոյս նախքան զծնունդն. կոյս ներ ծննդեան. եւ կոյս յետ ծննդեան։ Աղբիւր ողորմութեան. աղբիւր առողջութեան եւ շնորհի. աղբիւր մխիթարութեան եւ քաղցրութեան. աղբիւր գթութեան եւ խնդութեան. աղբիւր կենաց եւ թողութեան։ Ի ձեռն այնորիկ որբոյ եւ անճառելոյ խոնարհութեան որով զնծացաւ հոգի քո. նայնմ ժամու յորում քեզ ի ձեռն Գաբրիէլի հրեշտակապետի աւետարանեալ եւ յղացեալ եղեւ որդին Աստուծոյ։ Եւ ի ձեռն այնորիկ որբոյ եւ անճառելոյ խոնարհութեան. նորում դու պատասխանեցեր հրեշտակապետին Գաբրիէլի. Ահաւասիկ կամ աղախին Տեառն եւ եղիցի ինձ ըստ բանի քում։ Եւ ի ձեռն այնորիկ Աստուածայնոյ մատակարարութեան զոր յայնժամ ներգործեաց ի քեզ հոգին սուրբ։ Եւ ի ձեռն անճառելոյ շնորհի գթութեան, ողորմութեան, սիրոյն եւ խոնարհութեան. ի ձեռն որոց որդին քո՝ Տէրն մեր Յիսուս Քրիստոս էջ առնուլ զմարդկային մարմին. ներ վերապատուեցելում արգանդում քում։ Եւ ի ձեռն փառաւորագունեղի ուրախութեան, զոր ընկալար յորդւոյ քումմէ եւ Տեառն մերմէ Յիսուսէ Քրիստոսէ։ Եւ ի ձեռն այնորիկ սրբոյ եւ մեծագունեղի չարչարակցութեանն եւ դառնագունեղի սրտիդ վշտի՝ զոր ընկալար յորժամ զորդին քո զՏէր մեր Յիսուս Քրիստոս առաջի խաչին մերկացեալ եւ ի նմա բարձրացեալ՝ կախեալ՝ խաչեցեալ՝ վիրաւորեալ՝ ի ծարաւիլն զդառնագոյն ըմպելին՝ զլեղի եւ զքացախ բերանոյ նորա առ եղեալ տեսեր։ Ձէլի աղաղակելն լուար եւ զմեռանիլն տեսեր։ Եւ ի ձեռն հնգից վերաց նուեոյ որդւոյ քոյ։ Եւ ի ձեռն զալարման աղեաց քոց. վասն սաստիկագունի ցաւոյ վիրաց նորա. եւ ի ձեռն ցաւոյն զոր ընկալար յորժամ տեսեր զնա վիրաւորեալ։ Եւ ի ձեռն աղբերաց արեան նորա եւ ի ձեռն ամենեցուն կրից նորա եւ վշտաց սրտի քոյ՝ եւ ի ձեռն աղբերաց արտասուաց քոց։ Ձի յորժամ ամենեքումբք սրբովք եւ ընտրելովք Աստուած եկեսցես եւ փութասցիս յօգնութիւն եւ մխիթարութիւն ինձ ներ ամենեցուն աղօթից եւ խնդրուածոց իմոց։ Ներ ամենեցուն տառապանաց եւ հար-

կաւորաց իմոց եւ ներ ամենեցուն աշնոցիկ իրաց՝ ներ որոց ես
 դայլ իմն եմ առնելոց, խօսելոց կամ խորհելոց յամենայն աւուր,
 ի գիշերի եւ ի տունջեան, ի ժամում եւ ի պահում կենաց իմոց:
 Եւ ինձ պաշտօնէի թոյ հայցեսցես ի ցանկաւոյ որդւոյ քումմէ
 Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ, ամենեցուն առաքինու-
 թեանց զշարալրութիւն, հանդերձ ամենայնիւ ողորմութեամբ եւ
 մխիթարութեամբ, ամենայնիւ խորհրդակցութեամբ եւ օժան-
 դակութեամբ, ամենայնիւ օրհնութեամբ եւ սրբազործութեամբ,
 ամենայնիւ փրկութեամբ՝ եւ յուսադրութեամբ, ամենայնիւ
 խնդութեամբ եւ ուրախութեամբ՝ նաեւ զառատութիւն զամենե-
 ցուն բարեաց հոգեւորաց եւ զբաւականութիւն մարմնաւորաց եւ
 զշնորհս սրբոյ հոգւոյն որ զիս բարեպէս ի ձեռն ամենեցուն
 շարակարգեսցէ, զհոգի իմ պահեսցէ, զմարմին իմ կառավա-
 րեսցէ եւ հովանաւորեսցէ. զմիտս իմ ուղղեսցէ, զբարս յարգա-
 րեսցէ, զգործս ընկալցի, զմտածութիւնս սուրբս ներկայացու-
 ցեսցէ. անցելոց շարացն ներեսցէ, ի ներկայէն մաքրեսցէ եւ դա-
 պառնին հանդարտեցուցէ, զկեանս պատուելիս եւ զվճիտս ինձ
 առատրեսցէ. զհաւատ, զոյս եւ զսէր ինձ բաշխեսցէ՝ մասանց
 հաւատոյ հաստատարար հաւատալ եւ զհրամանս պատուիրանի
 պահել զիս արասցէ. զգայարանս մարմնոյ իմոյ կառավարեսցէ
 եւ հովանաւորեսցի եւ ի մեղաց մահու հափից զիս միշտ փրկեսցէ
 եւ պաշտպանեսցէ մինչեւ ի վախճան իմ: Զաղօթս զայսոսիկ հե-
 զութեամբ լուիցէ եւ ընկալցի եւ զկեանս մշտնջենաւորս ինձ պար-
 գեւեսցէ: Լուր եւ միջնորդեա վասն իմ, քաղցրագոյն կոյս Մար-
 իամ, մայր Աստուծոյ եւ ողորմութեան, ամէն:

Լատիներէնէ թրգմ. ՈՍԿԱՆ ԵՐԵԻԱՆՑԻ

«Գիրք Աղօթից. Մտածութիւնք Մաղթողականք»
 Ամսդերտամ, 1667, էջ 12-16: